# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 25 նոյեմբերի 2021թ. ժամը 11:00

*Մասնակցում էին՝*

| | |
|---|---|
| գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | Տիգրան Հակոբյան |
| գնահատող հանձնաժողովի անդամներ՝ | Նորայր Պողոսյան |
| | Անահիտ Պապոյան |
| գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ | Բաբկեն Աբրեյան |

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք և Մեծ Սեպասար բնակավայրերի մշակույթի տների գազաֆիկացման աշխատանքների համար սահմանված նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 1 717 370 ՀՀ դրամ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Մասնակցի անվանումը | Հասցե | Հեռախոս |
|---|---|---|
| «ԱՔԱՐԱ» ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ծուլուկիձե 5 | 093 13-31-00<br>096 13-31-01 |

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատաս-խանությունը հրավերով սահմանված պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում) | Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատաս-խանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին (համապատասխանում է/չի համապատասխանում) |
|---|---|---|
| «ԱՔԱՐԱ» ՍՊԸ | Համապատասխանում է | Համապատասխանում է |

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*«ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն էր.

ՀՀ դրամ

| Մասնակից | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|
| «ԱՔԱՐԱ» ՍՊԸ | 1526860 | - | 1526860 |

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

*Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ին, որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և գնման հայտով սահմանված գինը չգերազանցող գնային առաջարկ ներկայացրած մասնակից:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «ԱՔԱՐԱ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք և Մեծ Սեպասար բնակավայրերի մշակույթի տների գազաֆիկացման աշխատանքների կատարման պայմանագիր:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/39 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ____________ | Տիգրան Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ | ____________ | Նորայր Պողոսյան |

_________________ Անահիտ Պապոյան

Հանձնաժողովի քարտուղար _________________ Բաբկեն Աբրեյան